

**Իրանահայ համայնք**

**«Թունյան» դպրոցի բացումը**



«Ճանաչել զհմաստություն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», շնորհավոր Սասուն քաղաքամասի «Թունյան» աղջ. տարր. դպրոցի եւ «Սասուն» մանկապարտեզի նորակառույց շէնքի բացումը: Ահա մնան վերտառությամբ գրված պատարառով էր զարդարված նորակառույց դպրոցի ճակատը, որը տարիների սպասումից հետո՝ նոր եռանդ ու լիցք հաղորդեց ոչ միայն հիշյալ քաղաքամասի համայնքին ու այդ դպրոցը հանձնախոյ անակերտներին, այլեւ՝ թերանահայությանը:

Երեկ երեկոյան, Հոկտեմբերի 12-ին, դպրոցի մուտքը իրենց շարքերով զարդարել էին անակերտուհիները եւ անհամբեր սպասում էին պաշտոնական բացման հանդիսությանը: Դպրոցի մուտքի դռան ամրացված ժապավենը, իր օրհնության խոսքից հետո, հատեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանը՝ Թ. Հ. Թ. Պատգամավորական ժողովի ատենապետ Գեւորգ Աբուլյանի, Թ. Հ. Թեմական խորհրդի փոխատենապետ Վարուժ Հովհաննիսյանի ուղեկցությամբ:

Հատկանշական է, որ «Սասուն» մանկապարտեզի շինարարական աշխատանքները դեռ լիովին ավարտված չլինելու պատճառով՝ հիշյալ կրթօջախի պաշտոնական բացումը կկատարվի մի առ ժամանակ հետո:

**Հայաստան**


**ԼՈՒԾԱՐԿԵՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՉՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

Նյու Յորքում «Հոգևոր սպասավորների պատրաստության հայրապետական հիմնադրամի» ստեղծման նպատակով հանգանակվել էր 6 մլն դոլար: Մայր աթոռի տեղեկատվական համակարգի փոխանցմամբ՝ նվիրատվությունները շարունակվում են, իսկ հիմնադրամի ընդհանուր համակարգողն է Լոռնա Գոնոնյանը:

Նյու Յորքից Մայր աթոռ վերադարձի ճանապարհին Փարիզում Ամենայն հայոց կաթողիկոսը հանդիպել է շվեյցարիայի համայնքին: Նա գոհունակությամբ է ընդունել հոկտեմբերի 2-ին Ընդհանուր անդամական ժողովի որոշումը՝ լուծարելու Շվեյցարիայի հայ առաքելական եկեղեցու խորհուրդը, որ անհնազանդություն էր դրսևորել Մայր աթոռի դեմ: Հանձնարարվել է ժնեի և Լեման շրջանի նորակազմ ծուխի ատենապետ Արդեն Շելլեֆյանին եւ Շվեյցարիայի

հայ առաքելական եկեղեցու խորհրդի ատենապետ Դանիել Փափազյանին եւ Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Մեսրոպ վարդապետ Պարսամյանին ձեռնամուխ լինել պատարագների վերսկսմանը ժնեի Ս. Հակոբ եկեղեցում:

**Եվրոպական արժեքներն Արցախում գործում էին դեռ 1500 տարի առաջ**



Վերջին տարիներին մոդայիկ է դարձել Հայաստանում եվրոպական արժեքներ քարոզելը: Միևնույն, փորձը ցույց է տալիս, որ դրանց քարոզիչները պարզապես տեղյակ չեն սեփական ժողովրդի քաղաքական և իրավական ժառանգությանը: Նախապես ասենք, որ «Եվրոպական քաղաքակրթական համակարգ» կոչվածի հիմքում ընկած են մի քանի սկզբունքներ՝ ինդիվիդուալիզմը, մարդու իրավունքների գերակայությունը, իշխանությունների տարարանջատումը, քաղաքացիական հասարակության առկայությունը և այլն: Հայացք նետենք մեր ժողովրդի պետության և իրավունքի պատմությանը:

Դեռևս 1500 տարի առաջ՝ 500-ականների սկզբին, Արցախի և Ուտիքի թագավոր Վաչագան Բարեպաշտի նախածեռնությամբ ընդունվում է Սահմանադրություն, որի՝ 1288 թվականին արտագրված տարբերակը մինչ այժմ պահվում է Մատենադարանում (տե՛ս լուսանկարը): Սկզբնական շրջանում Սահմանադրության նախագիծն ուղարկվում է տարբեր բնակավայրեր, որտեղ հավաքվել և քննարկումներ են անցկացվում, բնակչությունն իր համաձայնությունն է տալիս, որից հետո թագավորը գումարում է համապետական մեծ համագումար և Նոր միայն հանրաքվեով ընդունում Սահմանադրությունը: Ընդ որում, համագումարը վարում էր մի շարքային գինվոր: Այս մոտեցումները 800-1000 տարի անց միայն երևան եկան Եվրոպայում:

Հայկական առաջին Սահմանադրության առկայությունը և կարևորությունը, ցավոք սրտի, դեռևս համարժեքորեն չի ընկալվում մեր հասարակության կողմից: Այդ բացը լրացնելու նպատակով անցյալ տարի հրատարակվեց «1500-ամյա իրավակարգի ակունքներն Արցախում» գիրքը՝ երեք լեզուներով:

Այժմ գործարարներ Արմեն Դավթյանի և Մովսես Զավարյանի նախածեռնությամբ Ստեփանակերտում կանգնեցվելու է Վաչագան Բարեպաշտի արձանը: Արձանի էսկիզային տարբերակն արդեն պատրաստ է, իսկ բացումը նախատեսվում է հաջորդ տարի:

Հայկական առաջին Սահմանադրությունն ամենավաղ վկայությունն է այն բանի, որ, եթե մեր պետականության բնականոն զարգացումը 600-700 տարով չընդհատվեր, գուցե ինքներս լինեինք լոկոմոտիվն այն արժեքների, որոնք այսօր ընկած են արևմտյան ժողովրդավարության հիմքում...

### Ռուսական ներդրումը Հայաստանում հասնում է 3 մլրդ դոլարի. Տիգրան Սարգսյանը երկրորդ հանդիպում ունեցավ Պուտինի հետ



Սանկտ Պետերբուրգի հանրահայտ Կոնստանտինովյան պալատում կայացավ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի և Ռուսաստանի Դաշնության վարչապետ Վլադիմիր Պուտինի հանդիպումը: Երկու երկրների վարչապետների հանդիպումը հետաքրքրություն էր առաջացրել ոչ միայն հայաստանյան, այլև Ռուսաստանի առաջատար լրատվամիջոցների շրջանում: Մեծաթիվ լրագրողների ներկայությամբ Տիգրան Սարգսյանն ու Վլադիմիր Պուտինը խոսեցին երկու երկրների փոխհարաբերությունների, տնտեսական քաղաքականության, արդեն առկա և ապագա ծրագրերի մասին: Պուտինը, ողջունելով Սարգսյանին, նկատեց, որ Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունները զարգանում են դինամիկ տեմպով, առկա է բարձր ցուցանիշ, որը, ինչպես նշեց ՌԴ կառավարության ղեկավարը, առաջիկայում հնարավոր է բարելավել: Ինչպես հաղորդում է HayNews.am-ի թղթակիցը Պետերբուրգից, Վլադիմիր Պուտինն իր խոսքում անդրադարձել է Հայաստանի տրանսպորտային համակարգին՝ նշելով, թե Ռուսաստանը օգնել և օգնում է այն կատարելագործելու հարցում: <<Մենք այժմ աշխատում ենք Հայաստանի տրանսպորտային համակարգի բարելավման ուղղությամբ: Ռուսական կողմը ստանձնել է Հայաստանի երկաթուղու կոնցեսիոն կառավարումը և Հայաստանի երկաթգծի զարգացմանն ուղղված ներդրումները հասնում են 5 մլրդ ռուբլու: Ես գիտեմ, որ այս ուղղությամբ զարգացման լավ ծրագիր է առկա, ինչը նշանակում է, որ երկաթգծի զարգացմանն ուղղված աշխատանքները կշարունակվեն: Գիտեք, որ Ռուսաստանի և Վրաստանի միջև առկա Վերին Լարս անցակետը բացվել է նաև հայկական կողմի խնդրանքով, որպեսզի կարգավորվեն Հայաստանի և Ռուսաստանի միջև ցամաքային կապերը>>:

Պուտինը նաև նշել է, թե Տիգրան Սարգսյանի հետ հանդիպումից առաջ ինքը գրուցել է Մոլդովայի

վարչապետի հետ, և, որպես օրինակ, նշել, թե եթե այդ երկրում ռուսական ներդրումները հասնում են 200 մլն դոլարի, ապա Հայաստանում շուրջ 3 մլրդ-ի: Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանն էլ իր խոսքում շնորհակալություն հայտնեց ռուսական կողմին՝ ճգնաժամի տարիներին ցուցաբերած 500 մլն դոլար աջակցության համար, ինչպես նաև նշեց, որ այն հաղթահարման համար զգալի էր նաև այդ գումարի ներդրումը հայկական շուկա: Տիգրան Սարգսյանը նաև անդրադարձել է Հայաստանում ռուսական կապիտալի վիճակին՝ ընդգծելով, որ ռուսական գումարով ընկերությունների բանակը հասնում է շուրջ 1200-ի:

<<Ճգնաժամի հաղթահարման հետ միասին ռուսական ընկերություններն ավելի բարենպաստ են զգում իրենց հայկական շուկայում>>, -ասել է Հայաստանի կառավարության ղեկավարը:

HayNews.am

### Արեւմտյան Հայաստան

#### Երկրաշարժ Վանում. 85 մահացած. ցնցումները զգացվել են նաև Երևանում



Ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող Վան նահանգում 7,2 բալ ուժգնությամբ, փոխանցում են թուրքական լրատվամիջոցները: Երկրաշարժի հետևանքով Վանի նահանգի Թաբանլը շրջանում մի բանի շինություն է փլուզվել: Մահացածների թիվը ներկա պահի դրությամբ կազմում է 85 հոգի: Վիրավորների թիվն անցնում է 500-ը: Ցնցումները գրանցվել են տեղի ժամանակով 13:42-ին (Երևանյան ժամանակով 15:42-ին): ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը նույնպես արձանագրել է ցնցումներին իր պաշտոնական հաղորդագրությամբ, որը ներկայացնում ենք ստորև. « Հոկտեմբերի 23-ին, ժամը 15.41-ին գրանցվել է 7.1 մագնիտուդով երկրաշարժ, որի էպիկենտրոնը գտնվում է Թուրքիայում՝ Վան քաղաքից 38 կմ հյուսիս: Երկրաշարժի հիպոկենտրոնը գտնվում է 10 կմ խորության վրա, իսկ ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 9-10 բալ:


Երկրաշարժը 3-5 բալ ուժգնությամբ զգացվել է ՀՀ տարածքում: Տվյալները ճշտվում են: Կտրվի լրացուցիչ տեղեկություն>>: Միևնույն ժամանակ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնում տեղի ունեցավ օպերատիվ խորհրդակցություն ԱԻ նախարար Արմեն Երիցյանի գլխավորությամբ: Ըննարկվեց ՀՀ ԱԻՆ փրկարարական ստորաբաժանումների պատրաստակամության խնդիրը: ՄԱԿ-ի խողովակներով Հայաստանը 20 այլ երկրների հետ իր պատրաստվածությունն ու պատրաստակամությունը

հայտնեց Թուրքիա փրկարարներ ուղարկելու: Նախկինում Հայաստանն աջակցել է Թուրքիային 1999 և 2000 թվականներին:

ՀՀ նախագահի մամուլի գրասենյակը տեղեկացնում է, որ Սերժ Սարգսյանի պետական այցը ՌԴ շարունակվում է նախատեսված ծրագրին համապատասխան: Սերժ Սարգսյանը Մոսկվայից շտապ ցավակցական հեռագիր է հղել Թուրքիայի Հանրապետության նախագահ Աբդուլահ Գյուլին՝ Թուրքիայի տարածքում տեղի ունեցած երկրաշարժի կապակցությամբ: Հեռագրում, մասնավորապես, ասված է.

«Մեծարգո՛ պարոն Նախագահ, Ցավով տեղեկացա Վանում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի հետևանքով առկա ավերածությունների, զոհերի և փլատակների տակ մնացած մարդկանց մասին: Ցավում եմ տեղի ունեցածի համար, ցավակցում եմ և հայտնում եմ Ձեզ, որ Հայաստանի փրկարարների մասնագիտացված ստորաբաժանումը պատրաստ է սեղմ ժամկետում հասնել Էպիկենտրոն և անհապաղ անցնել փրկարարական աշխատանքների»: Լշենք, որ Թուրքիային օգնություն են առաջարկել մի շարք երկրներ, այդ թվում նաև Իսրայելը: Ներկայումս երկրաշարժից տուժած շրջաններում շարունակվում են փրկարարական աշխատանքները:

**Դարձյալ եկեղեցի. Թուրքիայի հայկական եկեղեցում երկարամյա ընդմիջումից հետո աղոթք է հնչում**



30-ամյա ընդմիջումից հետո Դիարբեքիրի (ժամանակակից Թուրքիա) Սուրբ Կիրակոս եկեղեցում Պոլստ հայոց պատրիարքի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի հետ կիրակի (23-10-2011) առաջին անգամ աղոթել են Թուրքիայից, Սիրիայից և Եվրոպայից Դիարբեքիր ժամանած հայերը:

Ողջունելով Դիարբեքիր ժամանած հյուրերին՝ Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայդեմիրը հայտարարել է. «Բարով եք եկել ձեր քաղաք: Դիարբեքիրը որքան իմն է, այնքան էլ ձերն է»: 1915-1960 թթ. Սուրբ Կիրակոս եկեղեցին օգտագործվել է որպես զինապահեստ, ապա դարձել բանկի գրասենյակ: Այնուհետև իշխանությունները այն վերադարձրել են հայ համայնքին, բայց ավերված և թալանված: 16-րդ դարի եկեղեցու վերանորոգման աշխատանքները սկսվել են 2009-ի հոկտեմբերից և կավարտվեն հաջորդ տարի: Ընդհանուր առմամբ կծախսվի 2,5 մլն դոլար, որի 70%-ը հանգանակել է Ստամբուլի հայ համայնքը, 30%-ը՝ Դիարբեքիրի քաղաքապետարանը:

«Մենք ցանկանում ենք Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցու վերանորոգման աշխատանքների ավարտից հետո տարին մեկ-երկու անգամ պատարագ մատուցել»,- թուրքական լրատվամիջոցներին տված հարցազրույցում ասել է «Սուրբ Կիրակոս եկեղեցի» հիմնադրամի նախագահ Թեքին Փափուչյանը: Մինչև 1915 թվականի ջարդերը Դիարբեքիրը Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից մեկն էր և իր տարածքով (37.500 քառ. կմ) գերազանցում էր ներկայիս Հայաստանի տարածքը, ուներ 269 հազ. բնակչություն, որից 105 հազարը հայեր էին: Դիարբեքիրն այսօր զուտ քրդական քաղաք է: Այստեղ ապրում են շատ քիչ թվով թուրքեր, ասորիներ, հայեր:

ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատող Քրիստինե Մելքոնյանն ասում է, որ Դիարբեքիրի քաղաքապետը, նախաձեռնելով այս միջոցառումը, նախնառաջ ցանկացել է նպաստել տարածաշրջանի զարգացմանը և հայերի հետ հարաբերությունների բարելավմանը:

«Ազգությամբ քուրդ Օսման Բայդեմիրի վարած քաղաքականությունն արժանացել է թուրք ազգայնականների քննադատությանը: Նրանք համոզված են, որ Բայդեմիրը հայանպաստ քաղաքականություն է վարում,- ասում է Մելքոնյանը: -Վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կառավարությունը չի աջակցում այս գործընթացին, բայց նաև չի խոչընդոտում, քանի որ, նախնառաջ, անհանգստանում է միջազգային հանրության արձագանքի համար»:

**Սուրբ Խաչում մատուցվեց երկրորդ պատարագը. մասնակցեց 2000 հայ**



Վանա լճում գտնվող Աղթամար կղզու Սուրբ Խաչ հայկական եկեղեցում այսօր, սեպտեմբերի 11-ին մատուցվեց պատարագը: Վերանորոգումից հետո թուրքական իշխանությունների կողմից որպես թանգարան գործող եկեղեցում թույլատրվում է տարեկան մեկ անգամ ծիսական արարողություն իրականացնել: 1915 թվականի հետո առաջին պատարագը մատուցվեց անցյալ տարի սեպտեմբերի 19-ին: Այս տարի մատուցվեց թվով երկրորդ պատարագը: Այս տարի ևս պատարագը մատուցել է Պոլստ հայոց պատրիարքի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը: Ծիսական արարողությունը տևել է շուրջ երեք ժամ:

Ըստ թուրքական «Հյուրիյեթ» պարբերականի, պատարագին մասնակցել է շուրջ երկու հազար մարդ:

**Քաղաքական քա՞յլ, թե՞ կրոնական հանդուրժողականություն. Սուրբ Խաչում թույլատրված պատարագը և՛ հանդիմանանքի է արժանանում, և՛ համեստորեն ողջունվում է**



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հրաժարվել է մասնակցել սեպտեմբերի 19-ին Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու պատարագին՝ մամուլի հաղորդագրության մեջ հայտարարելով, որ պատճառը եկեղեցու գմբեթին խաչի տեղադրման անհիմն հետաձգումն է:

«Մայր Աթոռին վստահեցվել էր, որ սեպտեմբերի 19-ին Սուրբ Խաչ եկեղեցում մատուցվող Պատարագից մեկ շաբաթ առաջ եկեղեցու գմբեթին մնայուն կերպով պիտի զետեղվեր օձված խաչը»,- ասվում է Սուրբ Էջմիածնի մամուլի գրասենյակի հայտարարության մեջ:

«Նկատի առնելով խաչի տեղադրման վերաբերյալ կատարված հավաստիացումների դրժումը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որ ընդառաջ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության խնդրանքին, սրբազան Պատարագին մասնակցություն պիտի բերեր երկու ներկայացուցիչներով, առկախում է նրանց մասնակցությունը սեպտեմբեր 19-ին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում մատուցվող սրբազան Պատարագի արարողությանը»:

Հայկական Սուրբ Խաչ եկեղեցին կառուցել է ճարտարապետ Մանուելը 10-րդ դարում՝ Վասպուրականի թագավորության ծաղկման ժամանակաշրջանում՝ Գագիկ Արծրունի թագավորի օրոք: Այն վերակառուցել են Թուրքիայի իշխանությունները և որպես թանգարան բացել 2007 թ.: 2010 թ. գարնանը կառավարությունը հայերին ակտիվ է տարին մեկ անգամ պատարագ մատուցել եկեղեցում:

Ավելի վաղ հայտարարվել էր, որ նախատեսված պատարագին կմասնակցեն Սուրբ Էջմիածնի առաջնորդարանից միաբաններ Մարկոս Էպիսկոպոս Հովհաննիսյանն ու Կոմիտաս վարդապետ Հովնանյանը:

Օգոստոսի վերջին Մեծի Տանն Գիլիկիո կաթողիկոսը հրաժարվել է պատարագին մասնակցելուց: Հայտարարությունում նշվում էր, որ կաթողիկոսն «ընդգծում է իր դիրքորոշումը Թուրքիայի հետևողական մերժողական քաղաքականության և միջազգային հանրության առաջ մարդու

իրավունքների պաշտպանի դերում հանդես գալու փորձերի դեմ»:

Հայաստանում շարունակվում են քննարկումներն այն հարցի շուրջ, թե արդյոք արժե՞, որ հայերը սեպտեմբերի 19-ին մեկնեն պատարագին մասնակցելու: Մեծ մասը կարծես դեմ է մասնակցելուն: Թեև թուրքագետ Արտակ Շաքարյանը, օրինակ, կարծում է, որ առիթը պետք է օգտագործել՝ որպես Թուրքիայում մնացած հայկական եկեղեցիները վերականգնելու և դրանցում պատարագ մատուցելու նախադեպ: «Լրագիր» թերթը գրում է. «Ակնհայտ է, որ թուրքերը «թույլ են տալիս» պատարագ մատուցել հայկական եկեղեցում՝ ցույց տալու, թե ո՞վ է «թույլ տվողը»: Թուրքիայի թույլտվությամբ Աղթամար գնալը կնշանակի միայն ճանաչել նրա իրավունքը»: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի կարծիքով՝ Աղթամար պետք է գնա այն մարդը, որն իր այցով ազդանշան կարող էր տալ թուրքական կողմին, որ եկեղեցին նրանց մշակութային ժառանգությունը չէ, այլ հայկական, և մենք ենք մեր ժառանգության տերը: «Հայաստանն այնտեղ պետք է ներկայանա ոչ բարձր մակարդակով, մենք պետք է ցույց տանք, որ հասկացել ենք, որ դա ընդամենը քարոզարշավ է»,- ասել է Դեմոյանը: Հանրապետական կուսակցության պատգամավոր Արտակ Ջաքարյանի կարծիքով՝ Աղթամար կղզում եկեղեցու գործունեության վերականգնումը ներքին ու արտաքին լաբարանների համար կազմակերպած Թուրքիայի հերթական շտուն է: Ըստ նրա՝ այդ շտուն ուղղված է առաջիկա ընտրություններից առաջ Թուրքիայի իշխանությունների ներքին ու արտաքին վարկանիշը բարձրացնելուն: Օգոստոսին Հայաստանի երիտասարդական ութ կազմակերպություններ հանդես են եկել կոչով՝ հրաժարվել Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում պատարագին մասնակցելուց: «Մեր տվյալներով շուրջ 6000 մարդ տոմս է գնել և պատրաստվում է այդ օրը ներկա գտնվել թուրքերի կողմից բռնազավթված հայրենիքում տեղի ունեցող շոու ծրագրին: Քաջ գիտակցելով այս ամենի հակահայ բնույթը, ցանկացած Հայի մասնակցությունը այդ միջոցառմանը համարելով չգիտակցված պրոթուրքական գործունեություն՝ պահանջում ենք աշխարհասփյուռ հայությունից չգնալ ու չմասնակցել թուրքական անգերազանցելի դիվանագիտության հերթական թուրքանպաստ և Հայաձադր միջոցառմանը: Մասնակցել ցանկացող ամեն Հայ պարտավոր է իրեն հարց տալ. իսկ ո՞ւր են այդ հրաշագեղ կառույցը կերտողների հետևորդները, նրանց զավակները...»,- ասվում է հայտարարության մեջ: Բացի այդ, Նյու Յորքում բնակվող հայագի դաշնակախար և կոմպոզիտոր Շահան Արծրունին հայտարարել է, որ սեպտեմբերի 18-ին՝ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում պատարագի նախօրեին, նա Վանում մեծ համերգով հանդես կգա: Երաժիշտն ասում է, որ ինքը եկեղեցին կառուցած Գագիկ Արծրունու ժառանգն է:

**ՔՐՂԱԿԱՆ «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՊԱՆԱԿՈՐԸ ԸՆՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

*Նա ընդունում է քրդերի պատասխանատվությունը հայկական կոտորածներում*

«Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի վերջին ընտրություններում ստացած ծայների քանակով մյուս բոլոր կուսակցություններին գերազանցել է երկրի քրդաբնակ հարավարեւելյան շրջաններում,

այսինքն քրդական կուսակցություն է: Թեև կալանված լինելու պատճառով նրա առաջադրած պատգամավորներից 8-ը զրկվել են մանդատից, սակայն կուսակցությունը ունենալով 26 պատգամավորական տեղեր՝ խորհրդարանական խմբակցություն է կազմել Մեջլիսում:

Թուրքական իշխանությունները, քաղաքական կուսակցությունները «խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը հաճախ մեղադրում են PKK-ին ծառայելու եւ այս կառույցի անջատողական նկրտումները թուրքական Մեջլիսում խորհրդարանականի կարգավիճակով պաշտպանելու, թերեւս դրանով էլ երկրում ահաբեկչությունը խթանելու մեջ:

Գալով «խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը, որքան էլ նա ստացած տեղերի քանակով ամենասակավաթիվ խմբակցությունն ունենա Մեջլիսում, այնուամենայնիվ, կարողանում է ընդդիմանալ ինչպես վարչապետ Երդողանի իշխող «Արդարություն եւ բարգավաճում», վերջինի հետ նաեւ ժողովրդահանրապետական ու «Ազգայնական շարժում» կուսակցություններին, այնպես էլ թուրքական պետությանը՝ դատապարտելով վերջինի ոչ թուրք բնակչությանը հալածելու ավանդական քաղաքականությունը:

Դա պատահական չէ, այլ՝ պայմանավորված է Թուրքիայում բնակչության 1/4-ը կազմող քրդերի աջակցությամբ, PKK-ի ավելի քան 30 տարվա վաղեմություն ունեցող զինված գործունեությամբ, երկրում քրդական հարցի հրատապությամբ, ինչպես նաեւ Իրաքի գլխավորությամբ հարեւան երկրներում, հետեւաբար եւ տարածաշրջանում քրդական գործոնի, հատկապես հակաիրաքյան 2-րդ պատերազմից հետո անախադեպ ակտիվացմամբ:

Այլ կերպ, «խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության գործունեությունը կարելու է ոչ միայն Թուրքիայում քրդական հարցի եւ քուրդ բնակչության ոտնահարված իրավունքների, այլեւ Մեջլիսում «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության «Ազգայնական շարժում» կուսակցության ազգային փոքրամասնությունների, էթնիկ եւ կրոնական խմբավորումների նկատմամբ անհամդուրժողական եւ ատելության դրսեւորումները զսպելու եւ երկրում առկա տարուները վերացնելու առումներով:

Այդ տարուների մեջ առանձնակի տեղ ունի Հայոց ցեղասպանությունը: Նախորդ նստաշրջանում քրդական այս կուսակցության պատգամավորը, կարծես համանախագահ տիկին Թուրքուն Էր, Մեջլիսի ամբիոնից հաստատել է ցեղասպանության փաստը՝ իր վրա գրավելով մյուս խմբակցությունների կատաղի զայրույթը:

Նրա օրինակին հետեւել է «խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության Դիարբեքիի պատգամավոր Ալթան Թանը: Ինչպես հոկտեմբերի 17-ին նշել է [stratejikboyut.com](http://stratejikboyut.com) կայքէջը, մասնակցելով Մարտինի համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովին, Թանը ելույթ է ունեցել եւ հայտարարել է. «Նախորդ դարում տեղի է ունեցել 1915-ի Հայոց ցեղասպանությունը: Թող արձանագրեն, որպես քաղաքական գործիչ, ես ցեղասպանություն բառն եմ օգտագործում»:

Թանը Մարտինի համալսարանում Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավորի կարգավիճակով ունեցած աղմկահարույց ելույթի մասին նշված կայքէջին պարզաբանումներ է տվել, մասնավորապես ասելով, որ

հայ ժողովուրդը ցեղասպանության է ենթարկվել Օսմանյան Թուրքիայում, դրա գլխավոր պատասխանատուն «Իթթիհադ վե Թերաքքիի» պարագլուխներն են: Այդ ժամանակահատվածում, նշել է նա, կոտորած են իրականացրել նաեւ հայ կոմիտաշիները, ապա եւ շարունակել. «Պետք է հրաժարվել «իմ մարդասպանը լավն է, իսկ քոնը՝ վատ» մոտեցումից: Պետք է բոլորի վիշտն արտահայտող ընդհանուր հուշարձան կառուցել եւ ներողություն խնդրել կատարվածի համար»:

Այնուհետեւ նա անդրադարձել է 1915-ի հայոց եւ ասորիների ցեղասպանության մեջ քրդերի պատասխանատվությանը, ընդգծելով. «Պատճառաբանելով, թե ամեն ինչ արել է «Իթթիհադ վե Թերաքքին», պետությունը, քրդերը չեն կարող արդարանալ: Թեև քուրդ ժողովուրդն ամբողջությամբ սուրը ձեռքին ցեղասպանության չի մասնակցել, սակայն ցեղասպանության համար քուրդ առաջնորդները լուրջ պատասխանատվություն են կրում: Ոմանք ասում են, որ 1915-ի իրադարձությունները չեն համապատասխանում ցեղասպանության միջազգային բնորոշումներին, հետեւաբար խնդիր ոչ թե ցեղասպանությունն է, այլ՝ տեղահանությունը: Սակայն ես հարցին այլ կերպ եմ մոտենում: Տվյալ ժամանակահատվածում մեր տարածքն ուներ 13 միլիոն բնակչություն, իսկ հայերը 1 միլիոն 200 հազար էին: Այսինքն նրանք կազմում էին երկրի ընդհանուր բնակչության 10 տոկոսը: Ներկայումս նրանց թիվը 40 հազար է Թուրքիայում: Որտե՞ղ են հիմա այդ հայերը: Ասում են, թե անհետ կորել են, համաճարակի գոհ դարձել, ճանապարհին մահացել կամ արտագաղթել են: Ոչ ոք առանց պատճառի տունը, տեղը, ունեցվածքը չի թողնի-գնա: 1915-ին հայերի գերակշռող մասը սրախողխող է արվել: Ոմանք սպանված հայերի թիվը ներկայացնում են 100 հազար, ոմանք էլ՝ 300 հազարի հասցնում: Իմ կարծիքով թիվը էական չէ: Մի՞թե քիչ է նույնիսկ 100 հազարը: Կարո՞ղ է արդարացնել մեզ»:

## Միջազգային

### 1915-ին հայերի հանդեպ ցեղասպանություն է իրականացվել. Թուրքիայի խորհրդարանի պատգամավորը կրկնել է իր խոսքը



News.am. 18-10-2011- Թուրքիայի խորհրդարանի միակ քրդական «խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավոր Ալթան Թանը Ստամբուլի հայկական «Ակուս» թերթին տված հարցազրույցում կրկնել է օրեր առաջ Մարտինի Արթուրյու համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովի ընթացքում արած իր հայտարարությունը:

Հայկական «Ակոս» թերթին տված հարցազրույցում Ալթան Թանը պնդել է, որ 1915-ին հայերի հանդեպ իրականացված ցեղասպանության մեջ դեր են ունեցել նաև քրդերն ու մահմեդականները: «Մական ցեղասպանության ժամանակ բոլոր քրդերը չէ, որ ձեռքները սուր են վերցրել, սակայն քուրդ լիդերներն ունեցել են մեղքի լուրջ բաժին», -ասել է պատգամավորը՝ քննադատելով նաև իսլամական հատվածի վերաբերմունքը Հայոց ցեղասպանության ժխտման հարցում: Նշենք, որ ավելի վաղ Ալթան Թանը նշել էր, թե ինքը որպես քաղաքական գործիչ 1915-ին հայերի դեմ իրականացվածը բնութագրում է որպես ցեղասպանություն: Ալթանն Թանը շեշտել է, թե կան պատճառաբանություններ, թե տեղահանման ժամանակ ճանապարհին մի մասը մահացել է հիվանդություններից, մի մասին սպանել են ավազակները եւ այլն: «Հիմա ես որպես խիղճ ունեցող մարդ եմ խոսում: Թե ինչ պայմաններում կոտորվեցին այդ մարդիկ, կարեւոր չէ: Հետեւանքն այն է, որ հայ ժողովուրդը ոչնչացվեց: Դրա ապացույցը նաև այսօր մեր աշխարհագրական տարածքի ժողովրդագրությունն է: Այն ժամանակ 13 մլն բնակչություն ունեցող երկրի 1,2 մլն-ը հայեր էին: Այսինքն՝ հայերը կազմում էին բնակչության 10 տոկոսը: Հիմա բնակչության թիվը 75 մլն է, իսկ հայերն ընդամենը 40 հազար են: Հետեւանքը սա է», -ասել էր Ալթան Թանը:

### Իրանում սահմանափակվել է ադրբեջանցի լրագրողների արտոնությունները



«Իրան Նյուզ» լրատվական գործակալությունը հաղորդում է, որ Ադրբեջանում Իրանի դեսպանատունը հայտնում է, որ Իրանը հատուկ կանոններ է ներկայացրել Իրան մուտք գործող ադրբեջանցի լրագրողների համար: Ադրբեջանի փոխանցմամբ, նոր կանոնադրության համաձայն, Ադրբեջանի ՁԼՄ ներկայացուցիչները պետք է ստանան մուտքի արտոնագրեր՝ Իրան մուտք գործելու համար: Ըստ այդմ, մուտքի արտոնագիր ստանալու համար լրագրողները ծրագրված այցից մեկ ամիս առաջ պետք է ներկայանան Ադրբեջանում գտնվող Իրանի դեսպանատուն, լրացնեն հատուկ փաստաթղթեր, այնուհետև լուսաբանող նամակի հետ միասին ուղարկեն Իրանի դեսպանատուն: Դեսպանատունը կարևորել է նաև, այն որ պետք է իրազեկված լինի Իրանում ադրբեջանցի լրագրողների կողմից նախատեսվող լուսանկարների ու տեսագրումների մասին:

### Քրդերը սորից ոտքի են ելել Թուրքիայի հարավ-արևելքում



Թուրքիայի ծայր հարավ-արևելքում գտնվող քրդաբնակ Յաբթարի նահանգի Յուբետբուվա շրջանում ցուցարարները փողոց են դուրս եկել՝ պահանջելով թույլ տալ «Քրդստանի աշխատավորական կուսակցության» (PKK) առաջնորդ Աբդուլլահ Օջալանի հանդիպումն իր փաստաբանների հետ, ինչը երկար ժամանակ ձգձգվում է: Թուրքական «Դողան» գործակալության փոխանցմամբ՝ ցուցարարների շարքում առանձնացել է 60 հոգանոց մի խումբ, որը սկսել է խարույկներ վառել փողոցներում և քարեր նետել ոստիկանների վրա: Թուրք իրավապահները ցուցարարներին ցրելու համար օգտագործել են շրջան մեքենաներ և արցունքաբեր գազ:

### Վախճանվել է Սթիվ Ջոբսը



05 Դոկտեմբեր, 2011- Այս գիշեր մահացել է Apple ընկերության հիմնադիր և նախկին ղեկավար Սթիվ Ջոբսը: Ինչպես տեղեկացնում է Associated press-ը, Ջոբսը 56 տարեկան հասակում մահացել է ենթաստամոքսային գեղձի քաղցկեղից: «Այսօր ողջ աշխարհը կորցրեց հանձարեղ և հրաշալի մի մարդու, իսկ ում բախտ է վիճակվել անձամբ ճանաչել և աշխատել Սթիվի հետ ընկերոջ և ուսուցչի: Սթիվ Ջոբսն իրենից հետո թողել է մի ընկերություն, որը կարող էր հիմնադրել միայն նրա մասշտաբի տեր մարդը: Նրա հոգին միշտ կղեկավարի մեր գործողությունները», - ասվում է Apple-ի տարածած հաղորդագրությունում: Նշենք, որ առաջիկայում լույս կտեսնի Սթիվ Ջոբսի կենսագրությունը iSteve: The Book of Jobs: Գրքի հեղինակը ամերիկյան CNN հեռուստաընկերության նախկին գլխավոր տնօրեն և ամերիկյան Time ամսագրի խմբագիր Ուոլթեր Այսաքսոնն է: Սթիվ Ջոբսը ծնվել է 1955թ. ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Մաունթեյն Վյու փոքր քաղաքում: Նրա կենսաբանական ծնողները Ջոանա Շիբլը և Աբդուլֆաթահ Ջոն Ջանդալին են (գաղթականներ են Սիրիայից): Ջոբսին, սակայն, մեկ շաբաթականից մեծացրել և դաստիարակել են ազգությամբ հայ Կլարան (ազգանունը Հակոբյան) և ամերիկացի Փոլ Ջոբսերը: «Իմ ծնողները նրանք են», - ասում էր Ջոբսը: Կլարան ԱՄՆ է գաղթել Հայոց ցեղասպանությունից հետո Թուրքիայի Մալաթիա նահանգից: Գրքում նշվում է, որ Կլարայի հայրը, Լուիս Հակոբյանը, ծնվել է Մալաթիայում 1894թ. իսկ մայրը՝ Վիկտորյա Արթինյանը՝ 1894թ. Իզմիրում:

Հասարակական

Միյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով



Մեկտեմբերի 19-ին Երևանի մարզահամերգային համալիրի հանդիսությունների դահլիճում իր աշխատանքները սկսեց Միյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովը: Հանդիսավոր նիստին ներկա էին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա-ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը, Հայ Կաթողիկե եկեղեցու պատրիարք Ներսես Պետրոս ԺԹ-ն, Հայ ավետարանական եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ վերապատվելի դոկտոր Մկրտիչ Մելքոնյանը, ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը, ՄԴՀԿ կենտրոնական վարչության ատենապետ Մեղրակ Աճեմյանը, ՌԱԿ կենտրոնական վարչության ատենապետ Մայր Խարապյանը, ՀՀԿ և ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը:

Համաժողովին մասնակցում էին 46 երկրներից ժամանած Միյուռքի 151 կազմակերպությունների 550 ղեկավարներ և ներկայացուցիչներ:

Հանդիսավոր նիստում բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը: Ողջունելով և շնորհավորելով Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարեդարձի առթիվ, Հայաստանի Հանրապետության Նախագահը համաժողովի մասնակիցներին ուշադրությունը հրավիրեց Հայրենիք-Միյուռք գործակցությանն առնչվող այն հիմնախնդիրների վրա, որոնք կենսական են Հայրենիքի և Միյուռքի հզորացման, ազգային միասնության, Ցեղասպանության ճանաչման, հայապահպանության համար: Ընդգծելով Միյուռքի դերը Հայրենիքի զարգացման գործում՝ ՀՀ Նախագահը նշեց նաև, որ «Միյուռքը նաև մեր ցավն է», իսկ «ամենաազդեցիկ միջոցը Միյուռքի ուժացման դեմ պայքարում՝ Հայաստանի հզորացումն է», «Միյուռքն ու Հայաստանը պետք է դառնան միմյանց շարունակություն», «Միայն վերածնված Հայրենիքի հզորացմամբ կարելի կլինի դիմագրավել զորբալացումից բխող ուժացման վտանգին, ինքնության կորստին»: ՀՀ Նախագահը շեշտեց նաև, որ «Ազգի իղձերն ու Հայաստանի ճակատագիրը միացնում են հայ ժողովրդին: .... վաղվա Հայաստանը պետք է տեսնել ավելի հզոր ու բարեշեն, հայ ժողովուրդը՝ կուռ ու միասնական»:

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եզրափակեց իր ուղերձը «համաժողովին արդյունավետ աշխատանք և առարկայական արդյունքներ» մաղթելով: Այնուհետև համաժողովին իր օրհնության խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ-ն՝ նշելով՝ «ժողովուրդներն ապրում և գոյատևում են իրենց Հայրենիքով, իսկ Հայրենիքը՝ իր զավակներով»: Անդրադառնալով համազգային նշանակության խնդիրներին՝ Հայաստանի հզորացում, Արցախի ճանաչում ու բարօրություն և

Ցեղասպանության ճանաչում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շեշտեց «Պահանջատիրությունը մեր ժողովրդի հոգու պարտքն է մեր նահանջ հիշատակի և Աստծո առջև»:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա-ն կոչ արեց ներկաներին գործնական քննարկումների և «առաջնորդվել ապագայի տեսիլքով», քանզի տասնամյակներ շարունակ «անկախության ոգին ճառագայթող, անկախության բաղձանքով երազեցինք ու ապրեցինք, իսկ այսօր միայն անցյալին նայելու և հպարտանալու օր չէ »:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա-ն նշեց, որ ազգի միասնականությունը վկայելու առումով կենսական են համազգային խնդիրների քննարկումները, իսկ որպես ուղեցույց նշեց «Հայրենիք-Միյուռք գործակցությունը»՝ որպես ազգի համար առաջնահերթ կարևորության խնդիր, որի հարցում անհրաժեշտ է իրապաշտ մոտեցմամբ փաստել ազգի ողջ կարողությունը: Եթե «Հայաստան-Միյուռք գործակցությունը համահայկական տեսլականով չի գունավորված, այն իրատեսական չէ: Անհրաժեշտ են համահայկական մոտեցումներ, դուրս գալ «Մենք» և «Դուք»-ի գիտակցությունից և անցնել հավաքական «Մենք»-ի գիտակցմանը»,- շեշտեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա-ն:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա-ն անդրադարձավ նաև Հայաստանը մեծապես ջլատող արտագաղթի երևույթին, նշելով, որ դարեր ի վեր օտարների բաղձանքն է Հայաստանը տեսնել առանց հայերի, ուստի անհրաժեշտ է «առաջն առնել» այս երևույթի, բարելավել ժողովրդի կենցաղային պայմանները, մշակել և իրականացնել բարեփոխումների հստակ ծրագրեր:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա-ն առանձնակի անդրադարձավ Ցեղասպանության ճանաչմանը և 100-րդ տարելիցին, նշելով Հայաստանի դերը՝ պետական մոտեցմամբ ու ճճով:

Այնուհետև համաժողովի մասնակիցներին ողջունեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը, Հայ Կաթողիկե եկեղեցու պատրիարք Ներսես Պետրոս ԺԹ-ն, Հայ ավետարանական եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ վերապատվելի դոկտոր Մկրտիչ Մելքոնյանը:

ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը ներկաներին խոստացավ «անգոյություն աստիճանի բաց ու անկեղծ» լինել: Անդրադառնալով Հանրապետությունում հասարակության բևեռացվածությանը՝ բանախոսը շեշտադրեց, որ այս հանգամանքը կարող է ատելություն առաջացնել հենց Հայրենիքի նկատմամբ, քանի որ իշխանությունները հնարավորություն չեն տալիս հասարակ քաղաքացուն հպարտանալու իր Հայրենիքով: Նա մտահոգություն հայտնեց, որ երկրի առկա ընկերային վիճակը, կոռուպացվածությունը և մյուս բացասական երևույթները կարող են մեր մեջ սպանել Հայրենասիրությունը և կոչ արեց կատարել համակարգային արմատական փոփոխություններ:

Համաժողովի հանդիսավոր բացմանը հաջորդեց **լիագումար նիստը**՝ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի նախագահությամբ:

«Հայոց պատմության հոլովույթներում և հասարակական գիտակցության մեջ մայիս ամիսը խորհրդանշում է հայ ժողովրդի հաղթանակների ամիս, իսկ սեպտեմբերը՝ հայոց պետականաստեղծման, պետականակերտման ամիս», - այսպիսի բնորոշմամբ սկսեց իր՝ «Հայաստան-Միյուռք գործակցության պետական քաղաքականության հիմնախնդիրները» թեմայով զեկույցը ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

Անդրադառնալով անկախության 20 տարիների ընթացքում ձեռք բերված հաջողություններին՝ նախարար Հրանուշ Հակոբյանը նշեց, - «Մենք պայքարում ենք համաշխարհային, տարածաշրջանային, ինչպես նաև երեքին մարտադրավերների լուծման համար: Ժողովրդի սոցիալական բարելավումը, տնտեսության առողջացումը, կոռուպցիայի վերացումը, արտագաղթի կանխումը, ժողովրդավարական ինստիտուտների ամրացումը, Միյուռքում ուժացման և

հայապահպանության խնդիրները հրամայաբար պահանջում են մեր ուժերի համախմբում»:

Նախարարը ներկայացրեց նաև ներկա ժամանակաշրջանի նոր փուլի Հայրենիք-Սփյուռք գործակցության քաղաքականության հիմնական ձևակերպումները՝ «Հայաստանը բոլոր հայերի Հայրենիքն է», «Հայ է այն անձը, ով իրեն հայ է զգում», «Աջակցել հայ մարդու ինտեգրմանը այն հասարակությանը, որտեղ ապրում է, և շարունակել իր ինքնությանը հավատարիմ մնալ», «Սփյուռքահայը Հայրենիքում պետք է շահ ստանա, դրամ վաստակի», «Գործակցություն» ըստ տարածաշրջանների», «Երկքաղաքացիության ինստիտուտի ներդրում, օրենդորության կատարելագործում», «Ճանաչել, վստահել և գործակցել» սկզբունքով կազմակերպել Սփյուռքի հետ աշխատանքը, «Աջակցել հայապահպանությանը և Սփյուռքի ուժացման դեմ պայքարին», որի կիզակետում հայ երիտասարդությունն է, որպես ազգային ինքնության շարունակության ապահովման հիմնասյուն և վահան, «Նպաստել նոր ձևավորվող համայնքների ինքնակազմակերպմանը», «Սփյուռքում հայ ներուժի համախմբումը և դրա օգտագործումը Հայաստանի զարգացման համար», «Հայրենադարձության խթանում», «Համահայկական առաջնահերթությունների ձևակերպումը»: Վերջին խնդրի շուրջ Նախարար Հ.Հակոբյան առանձնակի շեշտադրեց՝ Հայաստանի Հանրապետության գորացում, անվտանգության ապահովում, ԼՂՀ հարցի խաղաղ կարգավորում, Հայոց Ցեղասպանության ճանաչում, դատապարտում և հետևանքների վերացում, Սփյուռքում հայապահպանության հզորացում և պայքար ուժացման դեմ, Հայ եկեղեցու շուրջ համախմբում:

Այնուհետև անդրադարձավ ՀՀ սփյուռքի նախարարության եռամյա գործունեությանը նախարարն իր խոսքն ավարտեց՝ «Մեր նախարարությունը սփյուռքահայի տունն է, ուր յուրաքանչյուր սփյուռքահայ կարող է դիմել իրեն անհանգստացնող խնդիրներով»:

Լիագումար նիստում «Հայաստան-Սփյուռք գործակցության համակարգային զարգացումների ներկա հրամայականները» թեմայով զեկույցը կարդաց «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի փոխնախագահ Գագիկ Հարությունյանը:

«Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման ներկա փուլը» թեման ներկայացրեց ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը ներկայացրեց Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շարքը:

Սփյուռքի կազմակերպությունների դեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովի ընթացակարգով լիագումար նիստին և ՀՀ Նախագահի ընդունելությանը հաջորդեցին թեմատիկ նիստերը:

Համաժողովի մասնակիցները կամավորության ու նախընտրության սկզբունքով բաժանվեցին չորս՝ լեզվի և կրթության հիմնախնդիրներ, երիտասարդության հիմնախնդիրներ, Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ տարածաշրջանային հանձնախմբերի գործունեության մասին, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման կառուցակարգերի մասին, թեմատիկ խմբերի:

Թեմատիկ նիստերն ընթանում էին բուռն քննարկումներով, համարձակ առաջարկություններով:

Մեպտեմբերի 20-ին, համաժողովի լիագումար նիստում թեմատիկ նիստերի աշխատանքների ամփոփումն էր:

Լեզվի և կրթության հիմնախնդիրների մասին զեկույցեցին Ազգային կոնսերվատիվ վարչության ատենադպիր, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Տիգրան Ճինապաշյանը և Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայտաստեանը:

Վերջիններս համաժողովի ուշադրությանը ներկայացրեցին թեմատիկ նիստի ընթացքում մշակված առաջարկությունները:

1. Հայ ինքնության զարգացում և մշակում երիտասարդ սերնդի համար,
2. Անհրաժեշտ է, որպեսզի նույնացվեն ավանդական և նորաստեղծ Սփյուռքի կրթական ծրագրերն ու համակարգը,
3. Հայագիտության բնագավառի մասնագետների պատրաստում,
4. Պատրաստվող դասագրքերին զուգընթաց պատրաստվեն նաև դրանցով դասավանդելու մեթոդիկան,
5. Կարևոր է քրիստոնեական դաստիարակությունը,
6. Ուսումնական ծրագրերում անպայմանորեն ներառել և դասավանդել Հայ Դատի և հայ ժողովրդի պատմությունը,
7. Հայաստանի Հանրապետությունը պետք է բարոյական, նյութական և ֆինանսական օգնություն հատկացնի Սփյուռքում գործող հայագիտական ամբիոններին
8. Սփյուռքի դպրոցները վտանգված են, անհրաժեշտ է նոր դպրոցներ բացել դեպի արևմուտքի և եկեղեցիներին կից: «Հայաստան» հիմնադրամը պետք է կանոնաբար օգնություն և օժանդակություն ցուցաբերի հայ դպրոցին,
9. Գրթությունը միայն դպրոց չէ, կրթություն ասելով պետք է հասկանալ նաև ընտանիք, միջավայր, եկեղեցի, կազմակերպություններ, մամուլ, հեռուստատեսություն և ռադիո,
10. Ունենալ համահայկական թերթ տարբեր լեզուներով, թե էլեկտրոնային և թե տպագիր տարբերակով:

Հայոց լեզուն հայ ինքնության դրսևորման հիմնական կրվանն է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել ոչ գրականություն, ոչ մշակույթ, ոչ արվեստ: Ուստի պարոն Ճինապաշյանն առանձնակի շեշտադրեց հայոց լեզվի երկու ճյուղերին վերաբերող հարցերը: Այսպես.

1. հայոց լեզվի օտարացման դեմ պայքարը պետք է լինի միասնական
2. պատրաստել լեզվի ուսուցման հեշտացված մեթոդներ,
3. պետք է վերականգնվի մեսրոպյան ուղղագրությունը և մշակվի միատեսակ ուղղագրական համակարգ,
4. մանկապատանեկան գրականությունը պետք է տարածվի մայրենի լեզվի երկու ճյուղերով հավասարապես: Երիտասարդության հիմնախնդիրները ներկայացրեց ՄԴՀԿ կենտրոնական վարչության փոխատենապետ, Լիբանանի խորհրդարանի անդամ Սեպուհ Կալփակեանը: Նշելով ու շեշտադրելով այն փաստը, որ Սփյուռքի տարբեր համայնքներում խնդիրները տարբեր են և անհրաժեշտ է խնդիրները մշակելիս հաշվի առնել այս տարբերությունները՝ նա արձանագրեց թեմատիկ նիստի ընթացքում հնչած առաջարկները.

1. Աշխուժացնել ՀՀ սփյուռքի նախարարության և համայնքների միջև կապը փոխայցելություններով,
2. Սփյուռքի երիտասարդների մեջ սերմանել պետական մտածողություն
3. Երիտասարդների ուսման համար և Հայրենիք վերադարձող երիտասարդների համար սահմանել հատուկ արտոնություններ
4. առնվազն 2 տարին մեկ անգամ գումարել երիտասարդների համահայկական համաժողովներ
5. համախմբել կառույցները, ստեղծել համահայկական էլեկտրոնային ցանց, հոգաբարձուների խորհուրդ
6. ուսուցիչների վերապատրաստում,
7. օգտագործել այլ երկրների փորձը, ստեղծել համակարգչային ծրագրեր
8. պարբերաբար համայնքների օրեր կազմակերպել Հայաստանում,
9. խառնամուսնությունների դեպքում աշխատանք տանել օտարազգի ամուսնու հետ և դրականորեն տրամադրել հայի նկատմամբ, այսպես ասած՝ հայացնել,
10. հիմնել սփյուռքի հարցերն ուսումնասիրող կենտրոն
11. Բարձրացնել հայաստանյան հեռուստաընկերությունների լեզվական և մշակութային մակարդակը
12. Սկսել երկպալատ պառլամենտ ստեղծելու քննարկումները



Հայոց Յեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ՝ տարածաշրջանային հանձնախմբերի գործունեությունների տեսչականը ներկայացրեց ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի և քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը: Ըստ մտահոգություն հայտնեց, որ Սփյուռքում չկա պատմաբանների նոր սերունդ:

1. Պետք է մշակվի, ձևավորվի և ստեղծվի կենտրոն, որի միջոցով Յեղասպանագետները, օսմանագետները և պատմաբանները, իրավագետները անմիջապես կանցնեն աշխատանքի: Այդ կառույցի դերը պետք է ստանձնեն ՀՀԳԱԱ-ն և ԵՊՀ-ն, ֆինանսական միջոցները պետք է տրամադրվեն թե Հայաստանյան և թե Սփյուռքի աղբյուրներից, այս ամենի նպատակն է պատրաստել բարձրագույն մասնագետներ:

2. Թե Սփյուռքում և թե Հայրենիքում դպրոցական, երիտասարդական և ուսանողության շրջաններին անհրաժեշտ է ծանոթացնել Հայոց Յեղասպանության և Հայ Դատի խնդիրներին՝ քննարկումների և դասավանդումների ժամանակակից մեթոդներով, մոտեցումներով և միջոցներով: Մեր Կորուստը, ողբը պետք է վերածել Հաղթանակի, կյանքի թեմայի:

3. Յեղասպանագետների պատրաստման անհրաժեշտություն:

4. Ժամանակն է Հայոց Յեղասպանության հարցից անցնել հատուցման հարցի բարձրացմանը:

Անհրաժեշտ է Յեղասպանության 100-ամյակի միջոցառումների կարևոր նպատակներից մեկը դարձնել հատուցման հարցը և միջազգային հանրությանն իրազեկել հատուցման հարցի վերաբերյալ:

Հատուցումը բաժանվում է հիմնականում երեք մասի՝ ա. համազգային, հողային, տարածքային խնդիրներ և մարդկային զանգվածային կորուստներ բ. եկեղեցապատկան կամ ազգապատկան հողերի հարցեր

գ. անհատական կալվածքների և ունեցվածքի խնդիրներ:

Պետք է օգտագործվեն միջազգային, տարածաշրջանային և տեղական դատարանները եկեղեցապատկան կամ անհատական կալվածքների հատուցման համար:

5. Համատեղել համայն հայության տեղեկատվական-քարոզչության հնարավորությունները Յեղասպանությունը ճանաչելու հարցում:

6. Շրջիկ ցուցահանդեսներ կազմակերպել հայ համայնքներում:

7. Աշխատանք տանել Արևմտյան Հայաստանում ապրող ծպտյալ հայերի հետ, այդ շրջանում հեռուստատեսություն և ռադիո հիմնելով, նպատակ ունենալով նրանց հայադարձել:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման կառուցակարգերի շուրջ առաջ քաշված խնդիրները ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման կառուցակարգերի շուրջ առաջ քաշված խնդիրները ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

- Մշակել Հայաստան-Սփյուռք նոր կառուցակարգեր:

- Ստեղծել ազգային կառույց՝ Ֆրանսիայում գործող CCAF-ի օրինակով:

- Նախապես ստեղծել համայնքային կառույցներ՝,

- Ապա տոկոսային հարաբերակցությամբ ստեղծել համազգային մարմինը կամ խորհուրդը:

- Ստեղծել հայերի միջազգային խորհուրդ, որը կղեկավարվի ՀՀ-ի կողմից:

- Սփյուռքում համայնքային գործերը համակարգի մեկ կառույց՝ Ռումինիայի հայոց միության օրինակով:

- Ստեղծել համահայկական կառույց՝ Երկպալատ խորհրդարանի կամ Ազգային ժողովի թևով:

- Ստեղծել համազգային կառույց՝ ժողովրդավարական սկզբունքներով և համամասնական կարգով:

- Մշակել Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների հայեցակարգի նախագիծ:

- Ուսումնասիրել, ամփոփել և օգտագործել Կ.Պոլսում 1860-ական թվականներին ստեղծված «Ազգային

Մահմանադրությունը» ազգային կառույցի ստեղծման և գործունեության համար:

- Համահայկական կառույցի ստեղծմանը պատրաստ չեն Սփյուռքի մի շարք կառույցներ, ինչպես նաև Հայաստանը: Սակայն կառույցը կարող է թռիչքային դեր ունենալ Հայաստանի զարգացման համար:

- Սկզբում անհրաժեշտ է հասկանալ Սփյուռքի կարիքները, ապա ջանալ դարանք լուծել:

- Մշակել և տարբեր լեզուներով հրատարակել ՀՀ հարկային, մաքսային, բանկային և այլ բնագավառներն ընդգրկող իրավական ակտերի գրքույկ, որն ամբողջական տեղեկատվություն կներկայացնի և կօժանդակի սփյուռքահայերին:

- Նպաստել հայաստանցի արվեստագետների համերգները համայնքներում Սփյուռքի համար նպաստավոր պայմաններով կազմակերպելուն: Հաճախ հայաստանցի արվեստագետների համերգները Սփյուռքի հայ համայնքներում կազմակերպվում են համայնքների համար ոչ ձեռնտու պայմաններով:

- Սփյուռքի հայ համայնքներում կազմակերպել հայ արվեստագետների բարեգործական հյուրախաղեր:

- Նպաստել համայնքներում հայապահպանությանը, մասնավորապես ուսուցիչներ ուղարկելով:

- Հայեցի դաստիարակության խնդիրները լուծելու նպատակով արևմտահայերենով տպագրել և համայնքներին տրամադրել հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության, Հայ Եկեղեցու պատմության, աշխարհագրության արևմտահայերեն դասագրքեր:

- Մշակել Հայաստան-Սփյուռք, Սփյուռք-Սփյուռք տեղեկատվության փոխանակման նոր և առավել օպերատիվ մեխանիզմներ:

- Մշակել և կիրառել Սփյուռքի հայ համայնքների, կազմակերպությունների, անհատների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հավաքման մեխանիզմներ և ստեղծել շտամարան:

- Սփյուռքի հայաշատ համայնքներում, բացի նախարարի խորհրդականից, սահմանել նաև նախարարի տեղակալի պաշտոն:

- Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման գործընթացում ներգրավել նաև գիտնականների, որոնց հետազոտությունները հաշվի առնելով մշակել գործակցության նոր մեխանիզմներ:

- ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպված համաժողովներին հրավիրել և բոլոր ծրագրերում ընդգրկել գիտնականների, ուշադրություն դարձնել հատկապես գիտական հաստատությունների գործունեությանը:

- Օգտագործել Սփյուռքի մասնագետների ներուժը:

- Փորձել Սփյուռքի չներկայացված մասը ներկայացնել:

- Առաջարկում է հայ անկախ բոլոր ֆիլմարտադրողներին մասնակցել «Համահայկական անկախ ֆիլմերի փառատոնին»:

- ՀՀ սփյուռքի նախարարությունը Սփյուռքի հայ համայնքների հետ աշխատի ավելի համակարգված (օր.՝ 1 տարում-1 համայնք սկզբունքով), այլ ոչ թե միաժամանակ աշխատել տարբեր համայնքների հետ:

- Հայաստան-Սփյուռք գործակցությունը կազմակերպել ապակենտրոնացված սկզբունքով՝ Հայաստանը կատարի իր անելիքը, Սփյուռքը՝ իրենը:

Կազմակերպել փոքր գործնական համաժողովներ և քննարկումներ:

- Բարելավել ՀՀ օրենսդրական դաշտը, նպաստել կոռուպցիայի նվազմանը:

- Հայաստանը պետք է վստահություն ներշնչի Սփյուռքին, Սփյուռքը պետք է վստահի Հայաստանին:

- Նկատի ունենալով Սփյուռքից որոշ թվով հայերի ներգաղթը դեպի Հայրենիք՝ պայմաններ ստեղծել, որ այս ընթացքը շարունակական լինի ու նաև նպաստավոր պայմաններ ստեղծել հայ գործարարների ներդրումների համար:

- Շարունակել ներդրումները Հայաստանում և աշխուժացնել հիմնադրամների համար գումարների հայթայթման աշխատանքները:

-ՀՀ Ազգային ժողովում որդեգրել «Մեկ ժողովուրդ՝ մեկ խորհրդարան» բանաձևը:

-Ստեղծել հատուկ օրգան՝ իմի բերելով Սփյուռքի տեսակետները և դրանցից լավագույններն օգտագործել ՀՀ բարգավաճման համար:

Ստեղծել համահայկական ֆորում՝ Եվրոխորհրդարանի օրինակով:

-Ստեղծել կառույցներից ընտրված կառույց՝ հարակալական, տնտեսական և քաղաքական՝ ՀՀ-ին բարոյապես և նյութապես օգնելու համար:

-Ստեղծել պայմաններ ՀՀ-ից արտագաղթը կասեցնելու և ներգաղթը ավելացնելու համար:

-Դրացի կամ ոչ դրացի երկրների հետ հարաբերություն ունենալը ինքնանպատակ չէ, այլ իր չափով և ծավալով պիտի բժախնդրորեն ծրագրվի՝ ազգային շահերի դիտանկյունից վնասները նվազագույնի և օգուտը առավելագույնի հասցնելու համար, իսկ Թուրքիայի հետ հարաբերվելու լավագույն միջոցը չհարաբերվելն է:

-Հայաստանն իր բացառիկ գիտական և մասնագիտական ներուժով, բարձր մակարդակ ունեցող արտադրությամբ կարող է միջազգային շուկաներում մրցակցության մտնել և մասնավորապես սփյուռքյան մասնագիտական ներուժը գորակառի հրավիրելով արդյունաբերության զարգացած օրինակը լինի:

-Պետք է ուշադիր լինել, որ Հայաստանից արժեքավոր սարքավորումները կամ տնտեսության ու արդյունաբերության բնագավառում կարևորություն ունեցող մեքենաները անձնական շահերով արտասահմանում վաճառքի չհանվեն, էթե նման բան դեռևս կատարվում է:

-Հետևել հեռուստատեսությամբ հեռարձակվող ֆիլմերի, հաղորդումների բովանդակությանը:

-Հայաստան-Սփյուռք գործակցությունը կազմակերպել տարածաշրջանային առանձնահատկությունները հաշվի առնելով:

-Հայ ժողովրդի կարևորագույն խնդիրը Հայոց պետականության հզորացումն ու բարգավաճումն է:

-Իրականացնել ծրագրեր ակումբային ձևաչափով տարբեր բնագավառներում:

-լեզվի և համազգային կրթական համակարգի ստեղծում (միասնական ուղղագրություն).

-լրատվության և քարոզչական միասնական դաշտի ստեղծում, -ազգային մշակույթի, ժառանգության պահպանման և զարգացման ազգային ծրագրի իրականացում,

-իրավական համակարգի կատարելագործում, որը կապահովի յուրաքանչյուր հայի անկախ բնակության վայրից և քաղաքացիությունից,

-հայկական կապիտալի համախմբում, տրանսկոնտինենտալ սկզբունքով տնտեսական ծրագրերի իրականացում.

-Իրականացնել ներդրումային ծրագրեր Հայաստանում, ոչ թե միայն բարեգործական:

-Սփյուռքի և Հայաստանի կապը դարձնել ավելի ինտերակտիվ համախմբելու համար համայն հայության ներուժը (մասնագիտական, տնտեսական և այլն) և ներդնելու այն ՀՀ զարգացման համար:

-Հիմնել Հայաստան-Սփյուռք, Սփյուռք- Սփյուռք հորիզոնական կապեր և գործակցություն:

-Հայաստանում ակտիվացնել պայքարն աղանդների դեմ:

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

-Հայեցի դաստիարակության խնդիրները լուծելու նպատակով անհրաժեշտ է հավելյալ ուշադրություն դարձնել արևմտահայերեն որակյալ դասագրքերի պատրաստման աշխատանքին (հայոց պատմության և կրոնի) և զարգացնել համակարգչային համապատասխան ծրագրեր:

-Նպատակ է արևմտահայերենի պահպանության գործին: Կարելի է ստեղծել կայքէջ (արևմտահայերեն և արևելահայերեն), արբանյակային հեռարձակում, դասագրքեր, ուսուցիչների վերապատրաստման սեմինարներ և այլն:

-Ստեղծել նպաստավոր պայմաններ սփյուռքահայ ուսանողների ուսումնառության համար ՀՀ բուհերում, հատկացնել նպատակային տեղեր հայագիտության և բանավիրության մասնագիտություններով պետական պատվերի շրջանակներում:

-Հայաստանում և Սփյուռքում ծրագրել և որդեգրել բարոյական արժեքների միատեսակ ուսուցում, որի նպատակն է գալիք ժամանակների համար պատրաստել հայն ու հայ քաղաքացին:

-Ջարկ տալ քրիստոնեական դաստիարակության գործին և քաջալերել հայ եկեղեցու ավանդույթների պահպանումը:

-ԱՊՀ երկրներում արագացնել հայկական վարժարաններ հաստատելու գործընթացը:

**ԵՐԻՏԱՄԱՐԴԱԿԱՆ**

-Ավելի հաճախակի կազմակերպել Համահայկական մարզական խաղերը և այլ երիտասարդական հավաքներ:

-Եթե ՀՀ սփյուռքի նախարարությունը համակարգված աշխատի այլ պետություններում ՀՀ դեսպանությունների և համայնքային ու համահայկական մարզական միությունների հետ, ապա Համահայկական խաղերին կմասնակցեն մարզիկներ 50 շրջաններից:

-Գնահատելի են ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպած հավաքներն ու համաժողովները, ուստի անհրաժեշտ է կազմակերպել ուսանողական հավաքներ:

-Ստեղծել հայկական սոցիալական ցանց (Facebook-ի և Youtube-ի համակարգերում) և տեղադրել ՀՀ սփյուռքի նախարարության կայքէջի վրա՝ երիտասարդության շփումն ակտիվացնելու համար:

-Ստեղծել և զարգացնել երիտասարդությանը ավելի հետաքրքրող գրականություն: Խմբագրել նոր թերթեր, ստեղծել կայքէջեր, արբանյակով հեռարձակվող հաղորդումներ, ֆիլմեր և այլն:

-Հայաստան, Արցախ, Ցեղասպանություն, Պահանջատիրություն, Միացյալ Հայաստան, Մեկ ազգ, Մեկ Հայրենիք գաղափարների և կարգախոսների շուրջ հայ երիտասարդության մոտ մշակել համանման ազգային մոտեցումներ:

-Հայեցի դաստիարակությունն ու դրա ունեցած դերակատարությունը դարձնել միությունների աշխատանքի սևեռակետ, որպեսզի Հայրենիքի գաղափարը, Հայոց Ցեղասպանությունը և հայ ժողովրդի պահանջատիրության հասկացողությունները անջնջելի կերպով դրոշմվեն ներկա սերունդների գիտակցության մեջ:

-Գնահատելի են նախարարության կազմակերպած ոսկերիչների, իրավաբանների, բժիշկների սեմինարներն ու համաժողովները, կարելի է ընդլայնել դրանց աշխատանքային ծիրը՝ կազմակերպելով նաև ցուցահանդեսներ և գործնական հանդիպումներ:

-Հայության հզորացման գաղափարը տեսնել՝ ա)հայության բոլոր հատվածների միացման մեջ,

բ)հայության պատմական և հողային բոլոր իրավունքների ձեռքբերման մեջ:

-Աջակցել նորաստեղծ համայնքների կազմակերպման գործընթացին՝ հատկապես ուշադրություն դարձնելով ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրներին:

-Սփյուռքի բոլոր համայնքների մասնակցությամբ կազմակերպել տոհմիկ բարձր փառատոներ, որոնք ուղղված կլինեն հայկական խոհանոցի, պարավեստի, թատերական արվեստի, երգարվեստի, ազգային տարազների, ձեռարվեստի պահպանությանը:

-Հայաստանի, Արցախի և Սփյուռքի իրավիճակների անվտանգության հարցերը հավասարապես համարել ազգային առջնահերթ խնդիրներ: Մշակել հատուկ ռազմավարություն այն համայնքների վերաբերյալ, որոնք համաշխարհային կամ տարածաշրջանային զարգացումների հետևանքով հայտնվել են ծանր կացության մեջ, օրինակ՝ Իրաք, Սիրիա, Եգիպտոս:

-ՀՀ սփյուռքի նախարարությունում ունենալ Սփյուռքի ներկայացուցիչներից բաղկացած խորհրդատվական մարմին,

որը պարբերական հանդիպումների ընթացքում կքննարկի համայնքների հարցերը, դժվարություններն ու առաջարկները, կապահովի նրանց կարիքները:

- Պարբերաբար և հատկապես Սփյուռքին հուզող հարցերի քննարկումների համար Հայաստանի և Արցախի խորհրդարանների նիստերին հրավիրել Սփյուռքի շրջանների ներկայացուցիչներին:

-Ստեղծել Սփյուռք-Հայրենիք համակարգը պարփակող հատուկ խորհրդարան, որտեղ կքննարկվեն համազգային նշանակության հարցեր: Այդ խորհրդարանին մասնակցող սփյուռքյան ներկայացուցիչներն ընտրվեն Սփյուռքում բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից:

-Կիրարկել Սփյուռք-Հայաստան քաղաքական, մշակութային, տնտեսական ավելի ուժեղ երկկողմանի հարաբերություններ:

-Արցախի միջազգային ճանաչման հարցը դարձնել հայության բոլոր հատվածների սենտակետ:

-Սփյուռքի տնտեսական, քաղաքական, գիտական և հաղորդակցական բոլոր հնարավորություններն ի սպաս դնել Հայաստանի զարգացման և հզորացման գործին:

-Երիտասարդական ծրագրերը իրականացնել ավելի շատ մասնակիցներով և տարբեր ոլորտներում:

-Երիտասարդների շրջանում ուժացումը կանխելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել տարբեր երկրներում բնակվող հայ երիտասարդների մտածելակերպը և գործել համապատասխան: Չի կարելի մեկ գիրք տպագրել բոլորի համար:

-Երիտասարդները հեռանում են Հայ Եկեղեցուց անկիրթ հոգևորականների պատճառով: Անհրաժեշտ է նախ կրթել հոգևորական դասը, որը կկրթի երիտասարդներին:

-Քարոզչության ակտիվացման նպատակով պատրաստել և տարածել մեծ թվով բարձրորակ քարոզչական ֆիլմեր:

-Իրականացնել համայնքների քույրացման ծրագրեր:

-Իրականացնել այն քաղաքների քույրացում, որոնց քաղաքապետները կամ փոխքաղաքապետները հայ են: Դա կնպաստի գործակցության հետագա զարգացմանը:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ**

Խնդրում է նախարարի միջամտությունը ՀՀ արդյունաբերության նախարարին՝ միջազգային շուկային համապատասխան շուկա ստեղծելու համար:

Սա բարձրացված հարցերի և արված առաջարկությունների ոչ ամփոփ նկարագրությունն է:

Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովի թեմատիկ նիստերում արված առաջարկությունները և կատարված աշխատանքներն ամփոփելով ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն առաջարկեց բարձրաձայնել համաժողովի մասնակիցների կողմից ընդունված Հայտարարությունը:

Այնուհետև, մամուլի ասուլիսով իր աշխատանքներն ավարտեց Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովը:

Բանախոսներն էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀԿ և ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը, Վիեննայի Միջիթայան Միաբանության աբբահայր Հ. Պողոս Օ. Գոճանյանը, Ս. Սեպուհ արքեպիսկոպոս Սարգիսյան՝ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ, Ս. Ռաֆայել արք. Մինասյանը՝ Հայ Կաթողիկե եկեղեցու Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի թեմի առաջնորդ, Նաթան Եպիսկոպոս Հովհաննիսյան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երաժարակազմության տնօրեն, Տիգրան Հինպաշյանը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ, Ազգային կենտրոնական վարչության ատենադպիր, Վազգեն Յակոբյանը՝ ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչական ժողովի անդամ, Մկրտիչ Մելքոնյանը՝ Հայ ավետարանական եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ, Մայք Խարապյանը՝ ՌԱԿ-ի կենտրոնական վարչության ատենապետ

և Սեպուհ Կալփակյան՝ ՄԴՀԿ-ի կենտրոնական վարչության անդամ, Լիբանանի խորհրդարանի պատգամավոր:

Մասնակիցները բարձր գնահատելով համաժողովի արդյունքները՝ իրենց շնորհակալական խոսքն ուղղեցին ինչպես ՀՀ Նախագահին, այնպես էլ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին, այսպես կարճ ժամանակահատվածում այդքան ահռելի ու դժվարին աշխատանք կատարելու և մեկ անգամ ևս Սփյուռքը միավորելու փորձ կատարելու համար:

Բանախոսները պատասխանեցին լրագրողների հարցերին:

**ԻՐԱՆԻ ԱԶԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՐՈՆԻ ՎՈՐԻՉ, ԻՐԱՆԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՄՈՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ**

ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՐԺԱՆ ԿԱԶՄ, ՄԵԾԱՐԳՈ ՆԵՐԿԱՆԵՐ

Թայլ տվեք ամենից առաջ երախտագիտության խոսք ուղղել Սփյուռքի նախարարությանն ու Հայրենի Պետականությանը:

Հայաստանի Հանրապետությանը տոնում է իր ծննդյան քսանամյակը: Դժվարին տարիներ են անցել, կորուստներով, բայց մահ՝ մեծ ձեռքբերումներով հագեցած տարիներ: Թվում է թե մենք՝ հայերս, Հայաստանում, Արցախում, հայաստանամերձ տարածքներում և սփյուռքում կամաց-կամաց ընտելանամ ենք նոր իրավիճակին, օրըստօրե ավելի շատ ենք ջանում ճանչել հայրենիքը, նրա կարիքներն ու անհրաժեշտությունը: Բայց արի ու տես, որ նվիրաբերման բուռն ցանկությունից ելնելով տրոհվում ու տարանջատվում ենք՝ բաժանվելով տարբեր կուսակցությունների, խմբակցությունների, ճակատների և տրոհումը երաշխավորող այլ միավորների: Դա էլ դեռ քիչ է: 1700 տարվա մեր եկեղեցին դեռ չմիավորած՝ նոր եկեղեցիներ որոնում, նոր հավատներ, կամ ավելի ճիշտ՝ նոր անհավատություններ: Միով բանիվե բոլոր հիմքերը պատրաստված են երկու հազար տարի քրիստոնյա ապրած և 16 դար սեփական լեզվով մշակույթ ստեղծած ազգի փոշիանալու համար...

Իհարկե, ամեն ինչ այսպես է, եթե հաշվի չառնենք այն զորեղ ու անկոտորում ոգին, որը բյուզանդացու և սասանյանի, արաբի ու մոնղոլի, սելջուկի ու թաթարի միջով, երկու 600-ամյա ստրկության միջով, շահի ու սուլթանի միջով, մի աշխարհակործան թրջածին եղեռնի միջով անց է կացրել իր ժողովրդին ու կյանքով լեցուն 21-րդ դարին հասցրել: Եվ ահա այդ ոգու պայծառ հառնումի փաստն ենք մշտն այսօր: Ոգի, որ մահ մեզ պիտի օգնի հաղթահարելու խոչընդոտները լուծելու դժվարությունները:

Սիրելի ներկաներ: Նոր ժամանակների հետ նոր բարդություններ են ծագում: Մերձավոր և Միջին Արեւելքի հայկական համայնքների զլխին կախված սպառնալիքները անզեն աչքերով էլ տեսանելի են: Այլ տարածքներում այլ դժվարություններ կան: Ժամանակի պահպանողական մ ավանդապահ համայնքների փոխարեն գոյանամ են ավելի արդիական հայացքներով ապրող մարդկային խմբեր: Մեծ տարածում է գտնում օտար լեզվով կրթվելու և դաստիարակելու փաստը: Խառն ամուսնությունները դառնամ են սովորական երևույթ:

Հայրենիքում տնտեսական ծանր պայմանների թելադրանքով արտագաղթը դեռ շարունակվում է: Հայրենիքն ու Սփյուռքը երկուստեք պաշտպանման կարիք են զգում: Մի կողմից հայապահպանության, իսկ մյուս՝ հայրենապահպանության: Այդպիսի իրավիճակում կազմակերպվող ներգաղթի ծրագրերը, նույնիսկ, հաջողվելու դեպքում չեն կարող մեծ նշանակության ունենալ: Չեն կարող, քանի որ դեռ արտագաղթ կա և դրա պատճառները բազմազան են: Սրանց մի մասը արտաքին է մյուս մասը՝ ներքին պատճառներ ունեն, որոնք ամեն դեպքում հասուն և խելամիտ մոտեցում են պահանջում:

\* Ստեղծված իրավիճակն առաջարկվում է ունենալ բազմակողմանի և բազմաբովանդակ համազգային ծրագիր, որի որոշակի հատվածը կարող է հատկացված լինել կրթության և լեզվի խնդիրների կարգավորմանը:

Այդ կապակցությամբ առաջարկվում է մշակել առանձին երկրներում և տարածաշրջաններում հային առավել անհրաժեշտ մասնագիտությունների ցուցակ, որը պետք է տրամադրվի տվյալ երկրի կամ տարածաշրջանի հայ երիտասարդին: Դա ազգապահպանման բնագոյից բխած անհրաժեշտություն է: Գիտակից և կողմնորոշված երիտասարդը չի ընտրի համալսարանական այնպիսի մասնագիտության, որը պիտի լքի կյանքի՝ ազպարեզ դարս գալուց հետո:

\*Արտերկրյան աշխատող հայոց լեզվի և գրականության, նաև հայագիտության այլ ուղղություններին պատկանող ամբիոնները մեծ նշանակության անեն և դրանց պահպանումը պետք է պետական հոգածության առարկա լինի:

Թեհրանի Ազատ համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնը հիմնադրվել է 1995 թ.-ին: Շաբաթական 20 ժամ ծրագրով աշխատող ցեղեկային ստացողներ ուսացման ամբիոն է և մինչև օրս տվել է ավելի քան 400 շրջանավարտ, որոնց մեծ մասը հայեր են: Նրանք համայնքի դպրոցներում, միություններում, մամուլում, ռադիոյում և Ազգային կառույցում հուսալի և ինքնավստահ աշխատանք են ծավալում: Մինչև այսօր ավելի քան 50 շրջանավարտ տարբեր բուհերում ստացել են նաև մագիստրոսի աստիճան: Ունենք 5 ասպիրանտ: 2011-ի հունիսին ԵՊՀ ասպիրանտ Սիլվա Սվավերոյանը պաշտպանեց թեկնածուական ատենախոսության և այս պահին Սպահանի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսն է: Սակայն, այդ ամենով հանդերձ մեր ամբիոնի գոյությունը վտանգված է և եթե շուտափույթ միջոցառումներ չձեռնարվեն, այն կարող է փակվել: Որոշակի քայլեր նախատեսվում են Տեր Սեպուհ արք. Սրբազանի. Ազգային իշխանության և խորհրդարանի հայ պատգամավորների միջոցով:

\* Առաջարկվում է պետական մակարդակի շփումներում կամ փաստաթղթերում, ժամանակ առ ժամանակ նշվի այդ հարցը: Թե չէ ինչպե՞ս հասկանալ Հայաստանի ավելի բան 20 դպրոցներում ու 5-ից ավելի բուհական ամբիոններում պարսից լեզվի դասավանդումը, երբ այսօր Թեհրանի համալսարանական միակ հայոց ամբիոնը փակվում է:

\* Առաջարկվում է քարոզչական մեծ փորձ ունեցող լեզուների օրնակով՝ տվյալ դեպքում գերմաներենի և Ֆրանսերենի նմանությամբ, ստեղծել լեզվի ուսուցման և կատարելագործման առանձին մակարդակների բաժանվող և մեկը մյուսին շարունակող դասընթացներ: Աշխատանքը կարող է կատարվել մասնագետների փոքր խմբերի սերտ համագործակցությամբ: Որպես օրինակ առանձնացվում է մանկական տարիքային խմբերի համար մինչև 1000 և ապա՝ պատանեկան տարիքային խմբերի համար մինչև 2000 այնպիսի բառապաշար, որն առավել հաճախական կիրառություն ունի լեզվի մեջ: Դրան են գումարվում համապատասխան պարզեցված քերականական և այլ կարգի նյութերը: Այդ նույն շրջանակներում կարող են հրատարակվել գրքեր և մատուցվել տեսալսողական նյութեր:

Հաջորդ փուլը կարող է ընդգրկել 3000-ից 5000 բառամբերք, իրեն համապատասխան քերականական նյութով: Այս մակարդակը մոտավորապես համընկնում է Թեհրանի մեր հայագիտական ամբիոնում ուսուցանվող մի շարք հետաքրքրական առարկաների բովանդակությանը, որոնք հայ գրականության լավագույն էջերի հիման վրա զարգացնում են և՛ լեզվաինացությունը, և՛ լեզվամտածողությունը, և՛ բանավոր խոսքը, և՛ գրավոր խոսքի կերտամը: Սա մինչև բուհական տարիքի համար է:

Երրորդ մակարդակը մնում է մասնագիտական և ապահովվելու է բուհական կրթության դեպքում:

Առաջարկվում ենք վերոհիշյալ ծրագրի ձևավորումը վստահել Հայաստանի և Սփյուռքի մի խումբ դասախոսների, այդ դեպքում մենք սիրով կարող ենք աջակցել և մեր ներդրումը բերել այդ ազգանպաստ գործին:

Ամենավերջում ցանկանում ենք մեր շնորհակալությունը հայտնել Սփյուռքի նախարարությանը՝ Երևանում անցյալ ամսին իրանահայ ամանքի օրերը կազմակերպելու համար: Այդ օրերին Երևանում մի շարք ազգային գործիչներ գնահատվեցին, ինչը արժանի է դրվատանքի, բայց որ միջոցառումների շարքը հատվածական էր և միակողմանի, դա էլ կասկածից վեր է: Մեր համայնքում աշխատում են 25 հասարակական կազմակերպություններ, որոնցից 7-ը լիարժեք միություններ են: Ունենք օրաթերթ, շաբաթաթերթ, երկշաբաթաթերթ, եռամսյա հանդես, տարեգիրք է բազմաթիվ օրացույցներ: Դրանց պետք է գունարել պարսիսերեն ու երգչախմբերը: Կան նաև շնորհաշատ նվազախմբեր: Սփյուռքի նախարարության գործը հայրենի երկրի վերաբերմունքն է, երբ մի քանի արժանիքներից գնահատվում է մեկը, երևույթը կարող է դժգոհության առիթ դառնալ: Այնուհանդերձ կրկին անգամ մեր գնահատանքի խոսքն ենք ուղղում Սփյուռքի նախարարությանն ու նրա գործիչներին:

## Մշակույթ

### ՋԵՅՍ ՈԱՍԵԼԸ ԲԱՅԱԿԱՅՏՈՒՄ Ե ԸԱՅ-ԵՐՐԱՅԱԿԱՆ ՄԻ ԱՌԵՂԾՎԱԾ

Նոյեմբերի 3-ին Բելմոնտի (Մասաչուսեթս) հայկական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ասոցիացիայի կենտրոնում Հարվարդ համալսարանի դասախոս, Մաշտոցի անվան մրցանակի արժանացած պրոֆեսոր Ջեյմս Ռասելը դասախոսություն է կարդալու «Հայ-երբայական մի առեղծվածի կամ 1000 տարվա հնություն ունեցող մի հայկական տեքստի մասին», որը գտնվել է Կահիրեի հրեական սինագոգներից մեկում: 19-րդ դարի վերջերին ճանապարհորդ մի գիտաշխատող Կահիրեի հրեական սինագոգներից մեկի պահեստարանում պատահականորեն հայտնաբերում է բազմաթիվ միջնադարյան ձեռագրեր, նամակներ, գրքեր և փաստաթղթեր՝ գրված երբայերեն լեզվով, որոնց մեջ եղել է նաև հայկական մի բառացանկ իր երբայերեն-արաբերեն թարգմանությամբ: Հարգարժան պրոֆեսորը բացահայտելու է, թե ինչ առիթով է գրված այդ բառացանկը, լույս սփռելով Մերձավոր Արևելքի մինչ այժմ անհայտ մի ժամանակաշրջանի վրա:

Պրոֆ. Ռասելը հեղինակ է մի շարք գրքերի, որոնց թվում են «Բոսֆորյան գիշերներ: Պետրոս Դուրյանի ամբողջական լիրիկական պոեմները» և «Հովհաննես Թևկուրանցին և միջնադարյան հայկական լիրիկական ավանդությունը» հատորները:

Դասախոսության մասին առավել մանրամասնությունների համար այցելել [hq@naasr.org](mailto:hq@naasr.org) կայքը:

### Վայերեն տպագրության 500-ամյակին ընդառաջ (1512-2012)

Աշխատագիրեց Եր. Բաղդասարյանը

#### ԱՍՏՎԱՍԵՆՈՒՅՑ

Աստվածաշունչը մարդկային քաղաքակրթության մեծ նվաճումներից է: Նրանում ամփոփված են անհիշելի ժամանակներից եկող կյանքի փիլիսոփայությունը, մարդկանց կուսական վիթխարի կենսափորձը, տիեզերքի, աշխարհի արարման ու պատմական անցքերի վերաբերյալ մեր նախնիների պատկերացումները, որոնք հաճախ սերտորեն առնչվում են գիտության տվյալներին:

Աստվածաշունչը բաղկացած է երկու մասից՝ Հին կտակարան և Նոր կտակարան: Ամբողջ Աստվածաշունչի մեջ մտնում են 75 տարբեր գրքեր, որոնցից 48-ը Հին կտակարանի գրքերն են, 27-ը՝ Նոր կտակարանի: Այս գրքերը գրվել են շուրջ քառասուն հեղինակների կողմից և տարբեր ժամանակներում՝ 1500 տարիների ընթացքում: Հին կտակարանի գրքերը գրվել են Հիսուս ՝ Քրիստոսի ծննդից առաջ, այսինքն՝ նախքան 1 թվականը: Այդ գրքերը գրվել են

հին հրեներեն (եբրայերեն): Նոր կտակարանի գրքերը գրվել են Հիսուսի խաչելությունից հետո՝ մինչև առաջին դարի վերջը (մինչև 1 թվականը)՝ հին հունարեն:

Հրեա հոգևորականները դեռ շատ հնում Հին կտակարանի գրքերը հավաքել ու միավորել են որպես մեկ ամբողջական գիրք:

Քրիստոնյա հոգևորականներն էլ հավաքել, ստուգել ու որպես մի ամբողջական գիրք միավորել են Նոր կտակարանի գրքերը: Եվ ահա Հին և Նոր կտակարանները միասին մի ամբողջական գրքում կազմել են Աստվածաշունչ մատյանը, որը դարեր շարունակ քրիստոնյա ամբողջ աշխարհի Սուրբ գիրքն է եղել և է: Հույներն այն անվանել են հենց Գիրք, հունարեն՝ Բիբլիա: Այս անունը տարածվեց աշխարհի լեզուների մեջ, իսկ հայերը գիրքը կոչեցին ճիշտ անունով՝ Աստվածաշունչ:

Աստվածաշունչն ամբողջությամբ կամ նրա առանձին մասերն այսօր թարգմանված են ավելի քան 1700 լեզուներով: Դա ամենից ավելի շատ թարգմանված ու հրատարակված գիրքն է:

Հայերն աշխարհում առաջիններից էին, որ թարգմանեցին Աստվածաշունչը: Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը և վարդապետ Մեսրոպ Մաշտոցը իրենց աշակերտների հետ՝ սկսած 405 թվականից, շուրջ 30 տարում, ամբողջությամբ թարգմանեցին Հին ու Նոր կտակարանները: Այդ թարգմանությունը լավագույնն է մյուս թարգմանությունների մեջ, ուստի և կոչվում է Թարգմանությունների թագուհի:

Հայերն առաջիններից են եղել նաև Աստվածաշունչը տպագրելու գործում: Հին կտակարանի գրքերից մեկը՝ Սաղմոսարանը, հայերեն առաջին անգամ տպագրվել է 1565 թվականին, Վենետիկում, Աբգար դպիր Թոխաթեցու կողմից:

Հայերեն Ամբողջ Աստվածաշունչը առաջին անգամ տպագրվել է 1666—1668 թվականներին, Ամստերդամում, Ոսկան վարդապետ Երևանցու կողմից: Դա 1436 էջանոց մի հսկա գիրք է, գեղեցիկ նկարազարդումով: Դրանից հետո հայերեն Աստվածաշունչը՝ թե՛ գրաբար, թե՛ աշխարհաբար, շատ անգամ է տպագրվել: Ամենից ավելի շատ տպագրվել է Նոր կտակարանը:

Աստվածաշունչը մեծ դեր է կատարել հայ ժողովրդի մտավոր ու հոգևոր զարգացման գործում, նրա ազդեցությունը հսկայական է հայ գրականության, արվեստի, պատմագրության, բանասիրության վրա: Հայոց հին ու միջնադարյան գրականությունը հասկանալու համար կարևոր է Աստվածաշնչի իմացությունը: Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի գրած շարականները, Կորյունի, Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Դավիթ Անհաղթի, Սեբեոսի, Ղևոնդի, Մովսես Կաղանկատվացու, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, Մատթեոս Ուշիայեցու, Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Գոշի, Ստեփանոս Օրբելյանի և մեր մյուս պատմիչների ու իմաստասերների երկերը լի են Աստվածաշնչի մտքերի հիշատակություններով, քաղվածքներով: Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Կոստանդին Երզնկացու և միջնադարյան մյուս հայ բանաստեղծների գործերը հիմնված են Աստվածաշնչի գաղափարների վրա, մեր միջնադարյան մանրանկարչությունը հիմնականում բաղկացած է աստվածաշնչյան պատկերներից: Նույնը վերաբերում է մեր հին զարդաքանդակներին և ճարտարապետությանը:

**ԼՄՅԵՐԵՆ ԱՈՍԻՆ ՏՊԱԳԻՐ ԳԻՐԸ**

«Ուրբաթագիրք», այսպես է կոչվում հայերեն առաջին տպագիր գիրքը, որը Հակոբ Մեղապարտը տպագրել է Վենետիկում, 1512 թվականին: Տառատեսակը բոլորգիր է, տպագրությունը՝ սև ու սպիտակ: 124 էջանոց գիրք է:

«Ուրբաթագիրք»-ի եզակի օրինակները պահվում են Հայաստանի և արտասահմանի մի քանի գրադարաններում: Գրքում ամփոփված են առասպելախառն պատմություններ, չափածո աղոթքներ:

Բայց ինչու է այս ժողովածուն ստացել «Ուրբաթագիրք» խորագիրը: Այդպես է կոչվել ուրբաթ օր անունից, իսկ ուրբաթը, ըստ Ղևոնդ Ալիշանի, հնուց անտի համարվել է հմայական ազդեցության օր:



1512-13 թվականներին Հակոբ Մեղապարտի ջանքերով Վենետիկում լույս են տեսել հայերեն առաջին գրքերը: Ահա դրանք ըստ հերթականության. «Ուրբաթագիրք», «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատունար», «Տաղարան»:

**ԸԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՃԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՑ**

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

Հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքի գաղափարական ղեկավարն էր Միքայել Նալբանդյանը: Ի տարբերություն իր նախորդների և ժամանակակիցների, Միքայել Նալբանդյանը հայ ժողովրդի զարթոնքն ու նրա՝ ապագան տեսավ հասարակ ժողովրդի, գյուղի և քաղաքի աշխատավոր մարդկանց հեղափոխական պայքարում: Այդ գաղափարը նա զարգացրեց «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ: Նա հանդես եկավ որպես հայ ժողովրդի արեւելյան և արևմտյան հատվածների սոցիալական, ինչպես նաև ազգային-ազատագրական պայքարի հեղափոխական-դեմոկրատական ուղղության գաղափարախոս ու մարտիկ: Հիմնականը, ըստ Մ. Նալբանդյանի, աշխատավորին հողով և աշխատանքով ապահովելն է, մարդու ազատությունը երաշխավորելը:

Մ. Նալբանդյանը կարևոր նշանակություն տալով լուսավորությանը, միաժամանակ նշում է. «Ինչպես կարող էր ստույգ լուսավորությունը տեղ գտնել մի աշխարհում, որի հիմքերը և տարերքն էին բռնակալություն և ստրկություն...»: Նա մեծ զայրույթով էր խոսում խավարանովների դեմ: 1859 թ. նամակներից մեկում նալբանդյանը նկարագրելով իր ծանր վիճակը և կրած հալածանքը հոգևորականների կողմից, նշել է. «Ես այս բոլորը քաշում եմ ազգի համար մեր դժոխքի սպասավոր ճիզվիթ հոգևորականներից, որոնց վերջին ջանքն է ազգը կուրացնելով վայելել նորա բարիքը»: Այնուհետև Նալբանդյանը գրում է, որ ինքը գիշեր-ցերեկ մտածում է, մեր ողբալի ազգի խեղճ վիճակի վրա: Աստված տար,-շարունակում է նա,- որ ես գերեզման չմտած տեսնեի մեր ազգի դրության բարվոքվելը և հոգևորականների բարբարոսությունից ազատությունը»: Մի ուրիշ նամակում նա գրում է.«Սիրտս արյունի ծով է, բայց այնքան զորություն ունիմ, որ

ոչ ոք՝ չէ կարող իմ դրությունը կարողալ երեսիս վրա... իմ ամեն բանը այսպես պատերազմով պիտի լինի...»: Այդպես էլ նա կոչ էր անում ճնշվածների՝ պայքարով հասնել ազատության, բռնակալության տապալման: Այդ նպատակին հասնելու համար պետք է գործի դրվեն մշակույթի, լուսավորության բոլոր միջոցները:

Հայոց լեզվի և գրականության աշխարհականացման, ռեալիզմի ուղիով նրանց զարգացնելու պահանջները, որ առաջադրում էր Մ. Նալբանդյանը, ըստ էության կազմում էին արվյանական գծի շարունակությունը նոր պայմաններում: Դա շատ կարևոր էր, որպեսզի աշխատավոր մարդն իր ազատության համար հուժկու զենք ձեռք բերի և հասարակական միտքը նոր ուղիով զարգանա: Աշխարհաբարը նա դիտում էր որպես հայերի համագրացին համախմբման, ազգային մշակույթի զարթոնքի և դեմոկրատական մտքի զարգացման կարևորագույն միջոց: Այդ մտքերն էր արծարծում նա «Հյուսիսափայլի» էջերում: Հատկապես կարևոր տեղ տալով մայրենի լեզվին, նա նշել էր, որ ազգի «**հոգին լեզուն է, առանց լեզվի չկա ազգ**»: Եվ այդ գաղափարը պետք էր այնպիսի հմտությամբ սերմանել, որ ոչ ցարիզմը և ոչ էլ սուլթանիզմը չկարողանային արգելել «նորից ծելու բույսը»,- ասում էր Նալբանդյանը: Հայկական դպրոցներն ըստ Մ.Նալբանդյանի, պիտի կոչված լինեին «**բանալ մանուկների միտքը, պինդ տնկել նոցա մեջ ազատության սերմը, վառել նոցա սրտերում հայության կրակը**»: Ըստ որում նա պահանջում էր առաջին հերթին ստեղծել տարրական դպրոցներ և նրանցում ընդգրկել ժողովրդի լայն խավերի զավակներին: Նրա պահանջը «ընդհանուր և հասարակ» կրթությունն էր, որ պետք է ծառայեր աշխատավոր ժողովրդի բարեկեցությանը:

Մ. Նալբանդյանի գաղափարախոսության մեջ առավել կարևորն այն է, որ ազատության գաղափարն ի վերջո միախառնվում է ժողովրդի սոցիալ-քաղաքական ազատագրության գաղափարի հետ: Նա սոցիալական հեղափոխության կոչ էր անում:

Ազգի և ազգաշինության գործը, ըստ Մ. Նալբանդյանի, պետք է սկսվի հիմքից, հասարակ ժողովրդից: Իսկ ազդը և ժողովուրդը չի կարող լուսավորվել, եթե նա քաղաքական ազատությունից և նյութական ապահովությունից զուրկ է. «Ստրկության մեջ չի կարող լուսավորության ծիլ կանաչել»: Այս մտքերը համահնչուն էին ռուս հեղափոխականների, հատկապես Չերնիշևսկու գաղափարներին: Ինչպիսիք հեղափոխական տեսանկյունից դնելով, Նալբանդյանը Կ. Պոլսում և Իտալիայում եղած ժամանակ իր զինակից Հ. Սըվաճյանի ուշադրությունն էր հրավիրում արևմտահայ սահմանադրականների ռեֆորմիստական, լիբերալ հայացքները մերկացնելու վրա:

Մ. Նալբանդյանը խոսելով հայ ժողովրդի ազատագրության խնդիրների մասին, ցանկանում է այդ ազատագրությունը շաղկապել գարիբալդիական շարժման հետ: Ուշագրավ է, որ Նալբանդյանը համեմատություն է անցկացնում այդ շարժման երկու փեղերի միջև և պարզում նրա դասակարգային էությունը: Նա ընդգծում է, որ Գարիբալդին հենվում է «հասարակ ժողովրդի» վրա, իսկ Վիկտոր Էմանուելը՝ բուրժուազիայի վրա: Նրանց պայքարի նպատակը հայրենիքի ազատագրումն է, բայց նրանցից ամեն մեկը այդ խնդրին մոտենում է տարբեր սկզբունքներով:

Մ. Նալբանդյանը Հարություն Սըվաճյանին 1860 թ. դեկտեմբերի 30-ին Նեապոլից գրած նամակում մեծ հիացմունքով է խոսում իտալական հեղափոխության

առաջնորդ Գարիբալդիի և նրա համակրողների մասին: «Երբ մեր շոգենավը մոտեցավ ծովեզրին,— գրում է նա,— Մեսսինայի նավահանգստում կանգնած էր մի ահագին բազմություն աշխույժ երիտասարդների, որոնց կարմիր շապիկը վկայում էր, թե պատկանում են իտալական հերոսին՝ Գարիբալդիի բանակին: Այդ վառվառն երիտասարդների դեմքի վրա գծագրված էր ուրախություն և խղճի հանգստություն, նոցա ճակատը փայլում էր արժանավոր պարծանքով:

Կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Գարիբալդի, անլուռ աղաղակում է հասարակ ժողովուրդը...»:

Շար. 9

## Սոհեր

### Մեր անցած ճամբան

Շարունակությունը համար 164-ից

Թ. Ղարախանյան Միրակցի

Ուղարկվեցինք Շիրազ քաղաք և Ամերիկյան սիստեմի դժվար բայց կարևոր զինավարժություն նաեւ ուսուցչական-կրթական վարժեցում ստանալու համար, առավոտյան ժամի 6:30-12:00-ը զինավարժություն, 12:00-ից մինչև 1:00-ը մեկ ժամ ճաշ եւ հանգստություն, 1:00-ից մինչև 4:00-ը հենց նույն զինվորանոցում ուսուցչական դաստիարակչություն: Այդ օրերին Պարսկաստանի Շիրազ քաղաքի Ուսման Ջօրքի զորանոցի պետն էր պարսիկ «Սարհանգ ԱՅՋԵԻ»-ն: Ձինւորանոցի ամեն մի 40 հոգանոց խմբակի համար հատկացւած էր հսկայ սրահներ իր փայլուն գետիններով եւ մաքուր պատերով, որտեղ 40 մահճակալ էին դասաւորված մաքուր անկողիններով եւ ծածկված բաց մոխրագույն բրդե ծածկոցով եւ բարձրի վրա ճերմակ ու մաքուր հուրհուրան սավանով: Եւ ամեն զինվոր պարտավոր էր այս մաքրությունը պահպաներ: Բացի ուրբաթ, ամեն առավոտ ժամի 5-ին դահլիճին արթնացնում էին եւ զինվորը պիտի վճացվեր, մաքրվեր, սափրվեր, մաքուր հագնվեր եւ պատրաստվեր, պիտի այսքան մաքրությունը ամեն առավոտ պահպանվեր, երեսներս սափրված, գլուխներս խուլուլ, զինվորական ունիֆորմը մաքուր ու արթուկած, կոշիկներս մաքուր և պլպլան սեւ փայլով, պատրաստվեին նախաճաշի: Կես ժամ անց, պատրաստ կանգներ իր մահճակալի առաջ սպասելու օրվա սպահին ստուգում կատարելու համար:

Իրիկնապահին զինվորական արարողություններից հետո փոքր անց ընթրիքի ժամի շեփուրը էր հնչում որ շարքերով ուստիլքների սրահ էինք ղեկավարվում և նույն ղեկավարությամբ վերադառնում կենտրոնատեղի (պարսկերէնով ASAYESHGAH) որտեղ ամեն մի զինվոր իր անձնական իրերն էր պահում իր մահճակալի տակ: Ընթրիքից հետոյ 5:30-ից մինչև 9-ը ազատ էինք անձնական գործերով / հարցերով զբաղւելու և վաղվա համար մաքրություն անելու մինչև 9-ի շեփուրը հնչեր և արդէն այդ ժամին պիտի մահճակալ մտած լինքից: Ձինւորական և զին-ուսուչական դասերը հենց տեղում էինք սովորում և որևէ նոր դաս հենց նույն օրին և նույն ժամին էր արժարծովում և այդ սիստեմով էլ մյուս օրը գոյություն չունէր: 12 կենտրոնատեղի կար և ամեն կենտրոնատեղի ուներ 2 զինւորական կապիտան և 3 ուսման կրթական ուսուցիչ: Մեր խմբի ղեկավար Ամերիկայում զինւորությունը ավարտված պարսիկ Կապիտան «Քօրեյրի» անունով, մի քանի առիթներով զրույցեց ինձ հետ և չգիտեմ ինչ պատճառով դեռ 3 շաբաթ զինվորությունից չանցած նշանակվեցի կենտրոնատեղի ղեկավար: Եւ այսպէս մինչև զինվորության վերջին օրը մնացի կենտրոնատեղի ղեկավարի պաճուռում, որ մնացած 39 հոգուն հարգանքով, սիրով և երեսն էլ պատժելով ղեկավարեցի մինչև մեզ բաժանեցին և ուղարկեցին մեր ծառայության վայրեր՝ հեռու գյուղեր: